Դեղագործության կառավարման ամբիոն

IV կուրսի պետական քննության հարցաշար (2025-2026)

1. Դեղագործական համակարգ, բնութագիրը: Հասկացողություն համակարգի և համակարգային մոտեցման մասին: Դեղագործական գործունեություն:
2. Առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, դրանց կազմակերպման իրավական ձևերը: Միջազգային համագործակցությունը դեղագործության բնագավառում: Առողջապահության համաշխարհային կազմակերպություն: Եվրամիություն: ՄԱԿ-ի թմրամիջոցների հսկման միջազգային կոմիտե: Դեղագործական միջազգային միավորում (դաշնություն):
3. Դեղագործական ծառայության կառավարման և կարգավորման մարմիններ: Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն: ՀՀ առողջապահության նախարարության դեղային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն: Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին:
4. Դեղը և դրա դերը առողջապահության համակարգում: Դեղերի նշանակությունը: Դեղերի ստեղծումը: Նոր և վերարտադրված դեղեր: Նախակլինիկական հետազոտություններ և կլինիկական փորձարկումներ:
5. Դեղերի անվանումները: Որը դեղեր: Դեղերի դասակարգումը: ATC դասակարգում:
6. Դեղերի շրջանառության կարգավորումը, դրա անհրաժեշտությունը, տարրերն ու բաղադրիչները: Դեղագործական օրենսդրություն, պետական քաղաքականությունը դեղերի շրջանառության ոլորտում:
7. Դեղերի շրջանառության կարգավորման անհրաժեշտությունը, տարրերն ու բաղադրիչները, կարգավորման ինստիտուցիոնալ միջավայրը:
8. Պետական քաղաքականությունը դեղերի շրջանառության ոլորտում: Դեղերի շրջանառության ոլորտում առկա հիմնախնդիրները: Դեղերի մասին ՀՀ օրենք: Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին ՀՀ օրենքը:
9. Լիցենզավորում: Լիցենզավորման ենթակա գործունեություններ:Դեղագործական գործունեության լիցենզավորում: Լիցենզավորման պարտադիր պահանջներն ու պայմաններն: Լիցենզավորման գործընթաց:Լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումը: Լիցենզավորման գործակալություն: Դեղերի կիրառման թույլտվությունը: Դեղերի գրանցման փուլերը: Գրանցման հավաստագիրը անվավեր ճանաչելու դեպքերը:
10. Դեղերի կողմնակի ազդեցությունների դիտարկումը: Դեղազգոնություն: Դեղերի անվտանգության մշտադիտարկման (հետգրանցումային հսկողության) անհրաժեշտությունը:
11. Հանրապետության դեղորայքային ապահովումը: Դեղագործական լոգիստիկա: Ապրանքաշարժի (բաշխման) ուղիները դեղագործական շուկայում: Մեծածախ միջնորդներ, դասակարգումը: Պատշաճ բաշխման գործունեություն (ՊԲԳ):
12. Ապրանքի պահպանումն ու հաշվառումը պահեստում: Ապրանքային պաշարների կառավարումը: Ապրանքի շարժը դեղագործական պահեստում: Ապրանքի իրացումը մատակարարի պահեստից: Դեղագործական պահեստ: Ապրանքի ընդունման կազմակերպումը դեղագործական պահեստում:

13. Դեղերի ներմուծման կազմակերպումը: Դեղերի ներմուծման գործընթացի փուլերը: Դեղերի ներմուծման թույլտվություն, հավաստագրի տրամադրում: Դեղային ապահովումը մարդասիրական օգնության ճանապարհով և բարեգործական ծրագրերի շրջանակներում: Դեղերի պետական գնումները

14. Դեղերի, դեղանյութերի, և ապրանքների պահպանումը դեղագործական կազմակերպությունում: Պահեստային սենյակներին ներկայացվող պահանջները:

15. Դեղորայքային (դեղային) ապահովում: Դեղերի մատակարարման համակարգի բնութագիրը, գործունեության կազմակերպումը, նպատակը, գործառույթները:

16.Բնակչության դեղորայքային ապահովումը: Դեղերի մանրածախ իրացումը, առանձնահատկությունները, օրենսդրական կարգավորումը:

17.Հանրային դեղատներ, դասակարգումը, խնդիրները, գործառույթները, աշխատանքի կազմակերպումը և տեղաբաշխումը, տարածքային կազմը, ներկայացվող պահանջները:

18.Դեղատան անձնակազմը, ներկայացվող պահանջները: Պատշաճ դեղատնային գործունեության պահանջներն ու դրա տարրերը:

19. Դեղատան արտադրական գործունեությունը: Դեղերի պատրաստման բաժնի աշխատանքի կազմակերպումը: Դեղատոմսերի ընդունումը, փորձաքննությունը, գնահատումը, գրանցումը: Դեղատոմսային ձևաթղթեր:

20. Դեղերի պատրաստումը դեղատանը: Դեղերի պատրաստման բաժնի աշխատանքի կազմակերպումը: Դեղերի պատրաստման տեխնոլոգիական սխեման և աշխատանքի ալգորիթմը:

21. Դեղերի պատրաստման կազմակերպումը ասեպտիկ պայմաններում: Լաբորատոր-մանրակշռման աշխատանքների կազմակերպումը: Դեղատանը պատրաստված դեղերի ձևավորումը:

22. Դեղերի որակի հսկումը: Որակի ներդեղատնային հսկման եղանակները, դեղերի որակի գնահատումը: Մանրէազերծ լուծույթների պատրաստման և որակի հսկման պահանջները:

23. Դեղերի բաց թողումը դեղատնից: Առանց դեղատոմսի, անվճար և զեղչով բաց թողումներ: Դեղատոմսերի պահպանումը: Դեղերի և դեղանյութերի հաշվառումը դեղատանը:

24. Դեղերի իրացումը առանց դեղատոմսերի: Ինքնաբուժման գործընթացը, հիմնախնդիրները, վտանգները, կառավարման գործընթացը: Պատասխանատու ինքնաբուժում: Դեղագործական հոգածություն: Ժամանակակից առողջապահության համակարգում օգնության մակարդակները:

25. Ստացիոնար հիվանդների դեղորայքային ապահովումը: Հիվանդանոցային դեղատուն, աշխատանքի ապահովումը: Ֆորմուլյարային համակարգ:Կլինիկական դեղագիտության հայեցակարգերը:

26. Կլինիկական դեղագիտության հայեցակարգը:

27. Դեղերի արդյունավետ կիրառում: Հիմնական դեղեր: Բուժման ստանդարտ ուղեցույցներ: Ֆորմուլյարային համակարգ: Դեղաբուժական կոմիտեներ: Դեղատնտեսագիտություն:
Դեղերի ոչ արդյունավետ նշանակումներ և կիրառում:

28. Դեղագործական կադրեր:Դեղագետի դերը առողջապահության համակարգում: Դեղագետի դերի մասին ԱՀԿ-ի բանաձևը: “7 և 9 աստղանի դեղագետ”: Դեղագետի պրոֆեսիոգրաման: Դեղագետ շրջանավարտի կողմից իրականացվող գործունեությունները:

29.Դեղագործական էթիկա և դեոնթոլոգիա: Դեղագետի/դեղագործի էթիկական կոդեքսը:

30. Շուկա, տեսակները, բնութագրիչները:

31. Պահանջարկ, առաջարկ: Պահանջարկի և առաջարկի օրենքները, կորերը:
32. Պահանջարկի և առաջարկի ոչ գնային դետերմինանտները: Առաձգականություն:
33. Շուկայական հավասարակշռություն, կորը: Գների վերահսկումը կառավարության կողմից, հետևանքները: Դեղագործական տնտեսագիտության առանձնահատկությունները:
34.Արտադրական հնարավորությունների կոր:
35. Կարմիր և կապույտ օվկիանոսների ռազմավարություն:
36. Ռազմավարական վերլուծություն: Մարկեթինգային հետազոտություններ: Մարկեթինգային տեղեկատվության տեսակները, հավաքումը, վերլուծությունը:
37. Մերչենդայզինգ, նպատակը, խնդիրները, սկզբունքները, կանոնները: Դեղատնային վաճառքի առանձնահատկությունները:
38. Տնտեսական հաշվառման համակարգը և այն վարելու անհրաժեշտությունը: Տնտեսական հաշվառման մեջ օգտագործվող չափիչները, բնութագրերը:
39. Տնտեսական հաշվառման տեսակները և դրանց համառոտ բնութագրերը:
40. Հաշվապահական հաշվառման դասակարգումը: Ֆինանսական և կառավարչական հաշվառում: Հաշվապահական տեղեկատվության օգտագործողները:
41. Ֆինանսական հաշվետվություններ օգտագործողները և նրանց տեղեկատվական կարիքները: Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները:
42. Ֆինանսական հաշվառման հիմունքները: Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպա-իրավական տեսակները:
43. Տնտեսվարող սուբյեկտի կամ սահմանազատման սկզբունքը: Կազմակերպության միջոցները, տնտեսական միջոցները (ակտիվները):
44. Գործառնությունների և տնտեսական կյանքի դեպքերի արդյունքում կազմակերպության ակտիվներում, սեփական կապիտալում և պարտավորություններում տեղի ունեցող փոփոխությունների դասակարգումը:
45. Պաշարների կանխիկ, ապառիկ գնման և վաճառքի հաշվառումը: Դեբետորական և կրեդիտորական պարտքերի մարման հաշվառումը: Տրված կանխավճարների, հաշվեգրված ծախսերի հաշվառումը: Շահույթի կամ վնասի մասին հաշվետվության կազմումը:
46. Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված լրացուցիչ ներդրումների հաշվառումը, սեփականատերերի կողմից իրականացրած մասհանումների հաշվառումը:
47. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության կազմումը: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության կազմումը:
48. Հաշվապահական հաշվառման հիմնական հավասարումը (The accounting equation), ընդլայնված (դինամիկական) տեսքը:
49. Ֆինանսական հաշվառման տարրերը և ճանաչումը:
50. Հաշվապահական գրանցումները (ժամանակագրական, համակարգված), փուլերը, հաշվետվությունների կազմումը:
51. Հաշվապահական հաշվառման հաշիվները (Т- հաշիվներ): Կրկնակի գրանցման համակարգը:
52. Ապրանքանյութական արժեքների գույքագրում, գույքագրման խնդիրները, նախապատրաստական աշխատանքները, անցկացման կարգը: Գույքագրման տվյալների ամփոփում: Բնական ծախսի հաշվարկ:

53. Ապրանքա-նյութական արժեքներ, որոնք գրանցվում են առանձին գույքացուցակներում (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ֆինանսական ներդրումների և այլն):

54. Աշխատանքի և աշխատավարձի հաշվառումը: Աշխատանքային պայմանագիր: Աշխատաժամանակ, տևողությունը: Աշխատավարձի տեսակները և աշխատավճարման ձևերը:

55. Հավելավճարներ: Արձակուրդ: Արձակուրդային վճարի հաշվարկ: Ժամանակավոր անաշխատունակության նպաստ: Աշխատանքի ընդունվելիս պահանջվող փաստաթղթեր: Փորձաշրջան՝ աշխատանքի ընդունվելիս:

56.Ապրանքաշրջանառության հաշվառում: Մուտքային–ելքային ապրանքային օպերացիաներ: Ապրանք, հաշվառման սկզբունքները: Դեղատան ապրանքային մատակարարման փուլերը: Մատակարարի ընտրության փուլերը, սկզբունքները:

57. Գնման-վաճառքի պայմանագիր, բաժինները:

58. Ապրանքի մատակարարում: Ապրանքի ընդունում: Վճարման իրականացում:

59. Ապրանքի ծախսային օպերացիաներ: Դուրսգրում: Դուրսգրումների հաշվառման փուլերը:

60. Դրամական միջոցներ: Կանխիկ դրամական միջոցների հաշվառում: Դրամարկղային գործառնություններ՝ մուտքային և ծախսային: Դրամարկղային օրդերներ: Դրամարկղային գիրք: Գումարի հանձնումը գանձապահին:

Գրականություն

1. Ամբիոնի դասախոսությունները
2. Սահակյան Ա.Ե.: Դեղագործական գործունեության կառավարումը, 2019
3. Principles of Marketing. University of Minnesota Libraries Publishing. 2015
4. Michael Baker, Susan Hart. The Marketing Book. 7th Edition. Copyright 2016

Դեղագործության կառավարման ամբիոնի վարիչ՝ Մ.Հ.Սիմոնյան